«Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ

2012 ԹՎԱԿԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԵՐԵՎԱՆ 2014

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Սույն վերլուծական տեղեկանքը կազմվել է՝ հաշվի առնելով ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 13-ի N207Ա որոշմամբ համաձայնեցված ներդրումային ծրագրի շրջանակներում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2012 թվականին իրականացված փաստացի ներդրումների վերաբերյալ ընկերության 2013 թվականի մայիսի 13-ի №04-ԵԲ-05/2103 գրությամբ ներկայացված հաշվետվությունը (հաշվի են առնվել նաև ընկերության 2012 թվականի հոկտեմբերի 5-ի №04-ԵԲ-05/4365 գրությամբ 2012 թվականի ներդրումների ծավալում առաջարկվող փոփոխությունները, ինչպես նաև 2014 թվականի հունվարի 24-ի №04-ԵԲ-05/192 և հունիսի 9-ի №04-ԵԲ-05/2290 գրություններով ներկայացված մեկնաբանություններն և առաջարկությունները):

ԲԱԺԻՆ 1.
«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2012 թվականի ներդրումային ծրագիրը

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2012 թվականի տարեկան ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսված էին տարբեր միջոցառումներ իրականացնել բաշխիչ ցանցերի վերակառուցման և վերազինման ուղղությամբ՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների, ինչպես նաև հուսալիության և անվտանգության աստիճանի բարձրացման նպատակով: Նախատեսված էր ներդրումներ իրականացնել նաև բաշխիչ ցանցերի ընդլայնման, բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման և ընկերության բնականոն գործունեության ապահովման նպատակով՝ մարդատար մեքենաների, համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, արտադրական և վարչական շենքերի ու շինությունների վերակառուցման, ինչպես նաև սարքավորումների և գործիքների ձեռքբերման ուղղություններով:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2012 թվականի ներդրումային ծրագրով նախատեսվում էր իրականացնել 8 432,0[1] մլն դրամի ներդրումներ:

Գրաֆիկ 1-ում ներկայացված է ընկերության 2012 թվականի ներդրումային ծրագրի ծավալների բաշխումը հիմնական ուղղությունների միջև:

Գրաֆիկ 1



Ինչպես երևում է գրաֆիկ 1-ից, ներդրումների հիմնական մասը՝ շուրջ 47,0%-ը, նախատեսված էր նոր սպառողների միացման և հատուկ ծրագրերի իրականացման նպատակով, որից շուրջ 41,8%-ը նախատեսվում էր ներդնել նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացնելու ուղղությամբ, 4,8%-ը՝ հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ, որով տարբեր մարզերում պետք է կատարվեին 17 հասցեական աշխատանքներ, իսկ

[1] Սույն վերլուծական տեղեկանքում ներկայացված բոլոր գումարները չեն ներառում ավելացված արժեքի հարկը:

0,4%-ը՝ բազմաբնակարան շենքերում տեղադրված տրանսֆորմատորների թրթռանքի և աղմուկի վերացման ուղղությամբ:

Ներդրումների մյուս խոշոր ուղղությունը՝ շուրջ 26,6%-ը նախատեսված էր ուղղել սպասարկման որակի ցուցանիշների բարելավման նպատակով մալուխային, օդային գծերի և ենթակայանների վերակառուցմանն ու վերազինմանը, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի մուտքերում էլեկտրամատակարարման ցանցի բարելավմանը:

Առևտրային հաշվառման համակարգի բարելավմանն ուղղված ներդրումներն իրենց տեսակարար կշռով երրորդն են՝ ընդհանուրի 15,5%-ը: Այդ նպատակով պետք է փոխարինվեին կամ տեղակայվեին նոր հաշվիչներ և հաշվիչների արկղեր՝ էլեկտրաէներգիայի մատակարարման և օգտագործման կանոններով դրանց ներկայացվող պահանջների ապահովման նպատակով: Նախատեսվում էին նաև 0,4-110 կՎ լարման ցանցերում հաշվառման համակարգի ավտոմատացման աշխատանքներ:

Ներդրումային ծրագրի բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումները, որոնք կազմում են ընդհանուրի 10,9%-ը, պետք է իրականացվեին գրասենյակային գույքի ձեռքբերման համար՝ 0,6%, համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերման համար՝ 6,4%, տրանսպորտային միջոցների և սարքավորումների ձեռքբերման համար՝ 1,2%, վարչական շենքերի և շինությունների վերակառուցման համար՝ 1,5%, ինչպես նաև չափիչ սարքերի և գործիքների ձեռքբերման համար՝ 1,2%: Այս ուղղություններով 2012 թվականի ընթացքում նախատեսվում էր իրականացնել 918,0 մլն դրամի ներդրումներ:

ԲԱԺԻՆ 2.
«Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի 2012 թվականի ներդրումային գործունեության արդյունքները

Համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի փաստացի իրականացված ներդրումների մասին հաշվետվության՝ ընկերությունը 2012 թվականի ընթացքում կատարել է 8 892,3 մլն դրամի ներդրումներ, որի

արդյունքում շահագործման են հանձնվել 8 216,0 մլն դրամի հիմնական միջոցներ: Մնացած 673,4 մլն դրամի աշխատանքները մնացել են անավարտ: Փաստացի իրականացված ներդրումներից 564,3 մլն դրամի ներդրումներն իրականացվել են ներդրումային ծրագրի շրջանակներից դուրս՝ առանց ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ համաձայնեցման:

Ստորև՝ աղյուսակ 1-ում, ներկայացված է հանձնաժողովի հետ համաձայնեցված և ընկերության կողմից փաստացի ավարտված ներդրումների ծավալների համեմատականը:

Աղյուսակ 1

N	Ներդրումների ուղղությունները	Հանձնաժողովի հետ 2012 թվականին համաձայնեցված ներդրումների կանխատեսվող ծավալը		2012 թվականի ընթացքում փաստացի ավարտված ներդրումների ծավալը		Ներդրու-մային ծրագրի կատարման ցուցանիշը
		մլն դրամ	%	մլն դրամ	%	%
1	Սպասարկման որակի ցուցանիշների բարելավում	2,244.0	26.6%	2,061.1	25.1%	91.9%
2	Նոր սպառողների միացում և հատուկ ծրագրերի իրականացում	3,966.0	47.0%	3,753.1	45.7%	94.6%
3	Առևտրային հաշվառման համակարգի բարելավում	1,304.0	15.5%	1,059.2	12.9%	81.2%
4	Գրասենյակային գույքի ձեռքբերում	50.0	0.6%	52.2	0.6%	104.5%
5	Համակարգչային տեխնիկայի և ծրագրերի ձեռքբերում	538.0	6.4%	460.9	5.6%	85.7%
6	Տրանսպորտային միջոցների և սարքավորումների ձեռքբերում	105.0	1.2%	101.6	1.2%	96.8%
7	Վարչական շենքերի և շինությունների վերակառուցում	125.0	1.5%	84.0	1.0%	67.2%
8	Չափիչ սարքերի և գործիքների ձեռքբերում	100.0	1.2%	79.5	1.0%	79.5%

9	Ներդրումային ծրագրի շրջանակներից դուրս իրականացված ներդրումներ	-	-	564.3	6.9%	-
10	**Ընդամենը**	**8,432.0**	**100%**	**8,216.0**	**100%**	**91%**

Ստորև՝ աղյուսակ 2-ում, ներկայացված են ներդրումային ծրագրի շրջանակներում իրականացված ներդրումների (ներառյալ անավարտ աշխատանքները) ձևավորման աղբյուրները.

Աղյուսակ 2
(մլն դրամ)

N	Ներդրումների ձևավորման աղբյուրները	Իրականացված ներդրումների ծավալը
1	Նախորդ ժամանակահատվածի անավարտ աշխատանքներ	397.72
2	Կողմնակի կազմակերպությունների միջոցով կատարված աշխատանքներ	4,338.17
3	Տեղակայում չպահանջող հիմնական միջոցներ	230.56
4	Սեփական ուժերով կատարված աշխատանքներ, այդ թվում՝	3,925.88
4.1	*աշխատավարձ և սոցիալական ապահովության ծախսեր*	*321.89*
4.2	*հումք և նյութեր*	*2,080.83*
4.3	*տեղակայման ենթակա սարքավորումներ*	*1,149.71*
4.4	*այլ*	*373.44*
5	ԸՆԴԱՄԵՆԸ	8,892.33

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, ներդրումների 4,5%-ը կազմում են նախորդ ժամանակաշրջանի անավարտ այն աշխատանքները, որոնք ավարտվել են 2012 թվականին: Ներդրումների 48,8%-ն իրականացվել է այլ կազմակերպությունների միջոցով, իսկ 2,6%-ը բաժին է ընկել տեղակայում չպահանջող հիմնական միջոցներին: Սեփական ուժերով կատարված ներդրումների ծավալը կազմել է ընդհանուրի 44,1%-ը:

Ստորև ըստ ուղղությունների ներկայացված են ընկերության կողմից 2012 թվականին իրականացված ներդրումների ծավալները՝ հետագայում դրանք սակագնով ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցման տեսանկյունից:

2.1 Սպասարկման որակի բարելավմանն ուղղված ներդրումներ

Սպասարկման որակի բարելավման նպատակով ընկերության 2012 թվականի ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել 2 244,0 մլն դրամի ներդրումներ՝ բաշխիչ ցանցերի լարման տարբեր մակարդակներում օդային և մալուխային գծերի, ենթակայանների վերանորոգման և վերակառուցման նպատակով: Փաստացի իրականացվել են 2 223,9 մլն դրամի աշխատանքներ, որի արդյունքում շահագործման են հանձնվել 2 061,1 մլն դրամի հիմնական միջոցներ:

Առաջին հերթին դիտարկվել է սպասարկման որակի ցուցանիշների փոփոխությունը 2012 թվականի ընթացքում: Ստորև ներկայացվում է 2012 թվականի ընթացքում սպառողների հոսանքազրկումների միջին հաճախության և տևողության փաստացի ցուցանիշների համեմատությունը 2011 թվականի փաստացի ցուցանիշների հետ:

Աղյուսակ 3

Մարզ, Համայնք	Հոսանքազրկումների միջին հաճախություն (հոսանքազրկում/սպառող)			Հոսանքազրկումների միջին տևողություն (րոպե/սպառող)		
	2011թ. փաստացի	2012թ. փաստացի	(3)-ը (2)-ի նկատմամբ	2011թ. փաստացի	2012թ. փաստացի	(6)-ը (5)-ի նկատմամբ
1	2	3	4	5	6	7
Երևան	4.73	4.62	2%	324.95	246.99	24%
Արարատ	5.78	2.33	60%	1251.42	414.10	67%
Վայոց Ձոր	6.75	4.66	31%	1419.96	507.47	64%
Արագածոտն	4.14	4.61	-11%	626.01	538.86	14%
Արմավիր	7.51	4.58	39%	893.48	537.07	40%
Կոտայք	6.47	5.00	23%	831.69	490.84	41%
Գեղարքունիք	6.12	5.22	15%	1101.97	735.94	33%
Տավուշ	6.39	6.20	3%	847.61	576.77	32%
Շիրակ	4.03	3.71	8%	460.00	405.19	12%
Սյունիք	0.93	3.50	-276%	290.53	429.00	-48%
Լոռի	5.46	5.28	3%	625.97	517.30	17%

Ինչպես երևում է աղյուսակ 3-ից, հանրապետության գրեթե բոլոր մարզերում՝ բացառությամբ Սյունիքի մարզից, հոսանքազրկումների միջին հաճախության և տևողության ցուցանիշները նախորդ տարվա համեմատությամբ բարելավվել են: Ուստի, կարելի է արձանագրել, որ այս ուղղություններով իրականացված ներդրումները ունեցել են իրենց դրական արդյունքը: Ինչ վերաբերում է Սյունիքի մարզին, ապա մտահոգիչ է ոչ թե 2012 թվականի ցուցանիշը, այլ 2011 թվականինը, որը միջին ցուցանիշից մոտ 5 անգամ ավելի փոքր է: Նշենք նաև, որ նույն մարզում 2010 թվականի հոսանքազրկումների միջին հաճախության և տևողության ցուցանիշը եղել է 3,04, ուստի կարելի է ենթադրել, որ նշված տարբերությունը գրանցումների որակի բարձացման արդյունք է, ինչի մասին է վկայում աղյուսակ 4-ում ներկայացված՝ 2012 թվականի ընթացքում ՀՀ մարզերի այն բնակավայրերի քանակը, որտեղ էլեկտրամատակարարման ընդհատումներ չեն գրանցվել:

Աղյուսակ 4

Մարզ, Համայնք	Բնակավայրերի քանակը	Բնակավայրերի քանակը, որտեղ ընդհատումներ չեն գրանցվել	%
Արագածոտն	119	18	15%
Արարատ	98	1	1%
Արմավիր	98	11	11%
Գեղարքունիք	97	4	4%
Լոռի	124	10	8%
Կոտայք	69	1	1%
Շիրակ	130	1	1%
Սյունիք	134	23	17%
Վայոց Ձոր	54	6	11%
Տավուշ	65	4	6%
Ընդամենը	**988**	**79**	**8%**

Ինչպես երևում է աղյուսակ 4-ից, ՀՀ մարզերի 988 բնակավայրերից 79-ում 2012 թվականի ընթացքում էլեկտրամատակարարման ընդհատումներ չեն գրանցվել: Հարկ է նշել, որ 2011 թվականի ընթացքում ընդհատումներ չգրանցած բնակավայրերի թիվը կազմել է 180, իսկ 2010 թվականին՝ 205: Ուստի պետք է փաստել նաև, որ ընկերության կողմից ներկայացվող տեղեկատվության որակը նախորդ տարիների համեմատությամբ բարելավվել է, սակայն վերջինս պետք է շարունակի ջանքեր գործադրել էլեկտրամատակարարման ընդհատումների գրանցումների որակը բարձրացնելու ուղղությամբ:

Ստորև ներկայացվում է նաև 2012 թվականի ընթացքում սպառողներին մատակարարվող էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախության

և տևողության փաստացի ցուցանիշների համեմատությունը 2011 թվականի փաստացի ցուցանիշների հետ:

Աղյուսակ 5

Մարզ, Համայնք	Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին հաճախություն (լարման շեղում/բաժանորդ)			Էլեկտրական էներգիայի լարման շեղման միջին տևողություն (ժամ/բաժանորդ)		
	2011թ. փաստացի	2012թ. փաստացի	(3)-ը (2)-ի նկատմամբ	2011թ. փաստացի	2012թ. փաստացի	(6)-ը (5)-ի նկատմամբ
1	2	3	4	5	6	7
Երևան	18.18	24.60	-35%	3188.28	4,479.73	-41%
Արարատ	15.64	20.76	-33%	2777.04	3,882.61	-40%
Վայոց Ձոր	9.18	20.42	-122%	1637.86	3,762.94	-130%
Արագածոտն	16.85	24.00	-42%	3023.66	4,423.21	-46%
Արմավիր	14.70	22.41	-52%	2608.62	4,229.95	-62%
Կոտայք	16.97	30.17	-78%	3021.41	5,506.80	-82%
Գեղարքունիք	21.14	25.04	-18%	3813.11	4,585.17	-20%
Տավուշ	20.46	24.68	-21%	3597.05	4,482.36	-25%
Շիրակ	16.53	20.66	-25%	2921.20	3,831.51	-31%
Սյունիք	12.06	27.84	-131%	2117.20	5,112.89	-141%
Լոռի	24.19	19.05	21%	4312.00	3,432.14	20%

Ինչպես երևում է աղյուսակ 5-ից, հանրապետության 11 մարզերից (այդ թվում՝ Երևան քաղաքը) միայն Լոռու մարզում է էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության ցուցանիշը բարելավվել՝ նախորդ տարվա համեմատությամբ: Մնացած 10 մարզերում լարման շեղման միջին հաճախությունը և տևողությունը միջինում գրեթե 59%-ով աճել են: Նման պատկերի պատճառ կարող է հանդիսանալ ինչպես ընկերության կողմից կատարված հաշվարկների թերի լինելը, այնպես էլ իրականացված ներդրումների անարդյունավետ լինելը:

Թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության կրճատման ուղղությամբ 2012 թվականին

իրականացվել են 310,4 մլն դրամի ներդրումներ: Նշված ծավալում ավարտված 225,8 դրամի ներդրումներն իրականացվել են ներդրումային ծրագրով համաձայնեցված թվով 8 հասցեական աշխատանքների ուղղությամբ: Հարկ է նշել, որ 2 ծրագրերի ուղղությամբ ավարտված աշխատանքներն իրականացվել են մասնակի՝ ծրագրով նախատեսվածի գրեթե 10%-ը: Բացի վերը նշվածը թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին հաճախության և տևողության կրճատման ուղղությամբ այլ ներդրումեր ենթաուղղությամբ իրականացվել և շահագործման են թվով 360 աշխատանքներ՝ ընդհանուր 76,3 մլն դրամ ծավալով:

2.2 Նոր սպառողների միացմանը և հատուկ ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումներ

Նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման և հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ 2012 թվականին նախատեսվում էր ներդնել 3 966,0 մլն դրամ:

Նոր սպառողների սպառման համակարգերն էլեկտրական ցանցին միացման ենթաուղղությամբ իրականացված ներդրումների ծավալում ներառված են՝ մինչև 2012 թվականը իրականացված ցանցին միացման աշխատանքների արժեքները, որոնց հաշվապահական ձևակերպումները կատարվել են 2012 թվականի ընթացքում, ինչպես նաև դեռևս էլեկտրական ցանցին չմիացված բաժանորդների մասով իրականացված ներդրումները: Հարկ է նշել, որ նոր բաժանորդների միացման նպատակով գանձվել են 781,6 մլն դրամի միացման վճարներ, որոնք ենթակա են նվազեցման ներդրումների ծավալից:

Հատուկ ծրագրերի իրականացման ուղղությամբ 2012 թվականին նախատեսվում էր ներդնել 404,0 մլն դրամ, որից 185,0 մլն դրամը՝ Սևանա լճի տարածքից 6/10 կՎ լարման օդային գծերի վերակառուցման ուղղությամբ, որտեղ հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 5,9 մլն դրամով: Մնացած 219,0 մլն դրամով նախատեսվում էին թվով 16 հասցեական աշխատանքներ՝ 6/10/0,4 կՎ լարման օդային գծերի և ենթակայանների

վերակառուցման ուղղությամբ, որոնցից 6-ում ընդհանրապես ներդրումներ չեն իրականացվել, իսկ 5-ում իրականացվել են մասնակի ներդրումներ: Բազմաբնակարանային շենքերում տեղադրված տրանսֆորմատորների թրթռանքի և աղմուկի վերացման ենթաուղղությամբ նախատեսված 32,0 մլն դրամով որևէ ներդրում չի իրականացվել:

2.3 Առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի հաջորդ՝ առևտրային հաշվառման համակարգի բարելավման ուղղությամբ նախատեսվում էր իրականացնել 1 304,0 մլն դրամի ներդրումներ: Այդ նպատակով պետք է փոխարինվեին հետագա շահագործման համար ոչ պիտանի հաշվիչները, կատարելագործվեր առևտրային հաշվառման համակարգը և տեղակայվեին հաշվիչների նոր արկղեր՝ հաշվառման սարքերի մեխանիկական վնասվածքները և կողմնակի անձանց միջամտությունը դրանց միացման սխեմային կամ աշխատանքին բացառելու, ինչպես նաև սպառողների և ընկերության ներկայացուցիչների համար հաշվիչի ցուցմունքի տեսանելիությունը, դրանց շահագործման և պահպանման անվտանգությունն ապահովելու նպատակով:

Համաձայն ներկայացված հաշվետվության, այս ուղղությամբ ընկերության կողմից շահագործման հանձնված ներդրումները կազմել են 1 059,2 մլն դրամ, այդ թվում՝

- հաշվիչների փոխարինման նպատակով՝ 683,3 մլն դրամ, որից 531,0 մլն դրամը սպառողների համար միաֆազ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների տեղակայման նպատակով,
- հաշվիչների արկղերի տեղադրման նպատակով՝ 151,3 մլն դրամ,
- 110-0,4 կՎ լարման ցանցերում էլեկտրական էներգիայի ավտոմատ հաշվառման համակարգի համալրման նպատակով՝ 208,6 մլն դրամ,
- հաշվիչների ստուգաչափման և ծրագրավորման նպատակով՝ 16,0 մլն դրամ:

Այս ուղղությամբ էլեկտրաէներգիայի միաֆազ հաշվիչների փոխարինման նպատակով հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 10,8 մլն դրամով:

2.5 Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով կատարված ներդրումներ

Ներդրումային ծրագրի այս ուղղությունով նախատեսվում էր.

- գրասենյակային գույքի և կահույքի ձեռքբերում՝ 50,0 մլն դրամ արժեքով: Այս նպատակով փաստացի իրականացված ներդրումները կազմում են 52,2 մլն դրամ և հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցվել է 2,2 մլն դրամով,
- համակարգչային տեխնիկայի, աքսեսուարների, լիցենզիաների և ծրագրային փաթեթների ձեռքբերում՝ 538,0 մլն դրամ արժեքով: Փաստացի ձեռք է բերվել 460,9 մլն դրամի համակարգչային և սերվերային տեխնիկա, լիցենզիաներ և աքսեսուարներ,
- տրանսպորտային միջոցների ձեռքբերում և վերասարքավորում (գազաբալոնների տեղադրում)՝ 101,6 մլն դրամ արժեքով: Փաստացի ձեռք է բերվել 4 մարդատար ավտոմեքենա՝ 24,6 մլն դրամ արժեքով, իսկ 77,0 մլն դրամ ներդրվել է շուրջ 200 ավտոմեքենայի վերասարքավորման ուղղությամբ:
- վարչական շենքերի և շինությունների վերակառուցում՝ 125,0 մլն դրամ արժեքով: Այս ենթաուղղությամբ 2012 թվականի ընթացքում ներդրվել է 84,0 մլն դրամ:
- չափիչ սարքերի և գործիքների ձեռք բերում՝ 100,0 մլն դրամ արժեքով: Ներդրումների փաստացի ծավալը կազմել է 79,5 մլն դրամ:

ԲԱԺԻՆ 3.
Հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը

2012 թվականի ընթացքում ընկերության կողմից փաստացի ավարտված 8 216,0 մլն դրամի ներդրումների ծավալում առկա են ներդրումներ, որոնք չեն ներառվել ընկերության սակագնային մարժայով փոխհատուցման ներդրումների ծավալում, մասնավորապես.

1. տարբեր լարման ցանցերում տեղակայված սարքավորումների (ԿՍՕ, ԿՌՈՒ, ՅԱՌՎ, ՎՌՈՒ, ՇՌՍ, ՇՉՕ, ԱՎՌ, ԼՏԵ, ՏՄ և այլն) մասով կատարված 675,9 մլն դրամի ներդրումներից շուկայական գների գնահատման և ընկերության ձեռքբերման գների համադրության արդյունքում իրականացված ներդրումների ծավալից նվազեցվել է 195,0 մլն դրամ, որը կազմում է 28,8%: Նշված գերազանցումները մեր կարծիքով հետևանք են մի շարք գործոնների: Մասնավորապես՝ ապրանքները ձեռք են բերվում ոչ թե արտադրող կազմակերպություններից, որը ձեռքբերվող ապրանքների ծավալները հաշվի առնելով կլիներ տրամաբանական, այլ տեղական միջնորդ կազմակերպություններից: Արդյունքում նշված կազմակերպությունները ապրանքի ինքնարժեքին ավելացնում են նաև իրենց ծախսերը և շահույթը: Մյուս գործոնը, որը մեր կարծիքով հանգեցնում է ապրանքների թանկացմանը, մատակարարված ապրանքների դիմաց ուշ վճարումներն են, ինչն առաջացնում է կապիտալի ներգրավման լրացուցիչ ծախսեր: Մասնավորապես, եթե վարկերի միջին տոկոսադրույքն ընդունենք տարեկան 16-20%, ապա հաշվի առնելով, որ մատակարարներին վճարումները կատարվում են ապրանքը մատակարարելուց մոտ 90 աշխատանքային օր հետո դա ևս էական ազդեցություն է ունենում ապրանքի գնի վրա: Միևնույն ժամանակ նշված միջնորդ կազմակերպությունների հնարավորությունները արտասահմանյան շուկաների ուսումնասիրման և այդ շուկաներում ներկայանալու ներուժի առումով անհամեմատ սահմանափակ են, որը ևս հանգեցնում է ոչ լավագույն տարբերակով ապրանքների ձեռքբերման,

2. տեղակայված էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների և հաշվիչների արկղերի ձեռքբերման գների և հանձնաժողովի կողմից հաստատված ներդրումային ծրագրով ընդունված գների համադրության արդյունքում՝ հաշվիչների արկղերի մասով կատարված 322,5 մլն դրամի ներդրումներից նվազեցվել է 36,0 մլն դրամ, իսկ էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչների մասով կատարված 787,3 մլն դրամի ներդրումներից՝ 57,3 մլն դրամ,
3. կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքների ընտրանքային ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ որոշ դեպքերում դրանց գները գերազանցում են շուկայականը: Նշված գերազանցումները հետևանք են որոշ նյութերի շուկայականից բարձր արժեքներով ձեռք բերման և փաստացի կատարված աշխատանքների արժեքի նկատմամբ նախահաշվային տոկոսների կիրառման: Հատկանշական է, որ շինմոնտաժային աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ էլեկտրական նյութերի մի մասը ձեռք է բերվում այդ աշխատանքները իրականացնող կապալառուների կողմից: Ակնհայտ է, որ առանձին աշխատանքների իրականացման նպատակով մանրածախ շուկայից ձեռքբերվող ապրանքների գները բարձր են կենտրոնացված կարգով կատարվող գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների գներից: Ուստի անհասկանալի է նշված ապրանքների ձեռքբերման գործընթացը կապալառուներին վերապահելը: Միևնույն ժամանակ կապալառուները նշված ապրանքների նկատմամբ հաշվարկում են շահույթ և վերադիր ծախսեր, որը իր հերթին բերում է կատարվող աշխատանքների թանկացմանը: Կապալառու կազմակերպությունների կողմից իրականացված աշխատանքներից շուկայականից բարձր գներով ձեռքբերված նյութերի, սարքավորումների, շինմոնտաժային աշխատանքների արժեքների ինչպես նաև չհիմնավորված տոկոսների կիրառման տարբերությունները միջին հաշվով կազմում են 11%, ինչը համարժեք է 241,8 մլն դրամի: Այս ներդրումները ևս նվազեցվել են

սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից,

4. առկա են 21,9 մլն դրամի նախագծման նպատակով իրականացված ծախսեր, որոնց արդյունքում կամ աշխատանքներ չեն իրականացվել կամ այդ աշխատանքների արժեքները անհամեմատ փոքր են նախագծով նախատեսվածից: Նախագծման այդպիսի ծախսերը դեռևս չեն մասնակցում ընկերության լիցենզավորված գործունեությանը, ուստի ևս նվազեցվել են սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից,

5. նոր սպառողների վերակառուցվող էլեկտրատեղակայանքները ցանցին միացնելուն ուղղված ներդրումների ծավալը որոշվել է՝ հիմք ընդունելով 2012 թվականին նոր սպառողների միացման ուղղությամբ իրականացված ծախսումների վերաբերյալ տեղեկատվությանունը, ինչպես նաև մինչև 2012 թվականն էլեկտրական ցանցին միացված 172 բաժանորդների միացման ծախսերը (որոնց հաշվապահական ձևակերպումները տրվել են 2012 թվականի ընթացքում) և միացման աշխատանքներն ավարտելուց հետո մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ստացած և դեռևս չստորագրած բաժանորդների միացմանն ուղղված ներդրումները: Արդյունքում 183,5 մլն դրամ նվազեցվել է սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալից:

6. սպասարկման որակի բարելավման ուղղությամբ կատարված 6(10)-0,4 կՎ լարման մալուխային և օդային գծերի վերակառուցման աշխատանքներում ներառվել են աշխատանքներ, որոնք համաձայն ընկերության 2012 թվականի հունվարի 20-ի 04ՎՍ-05/182 գրությամբ ներկայացված 6(10)-0,4 կՎ լարման օդային և մալուխային գծերի կապիտալ ծախսերի ճանաչման հայտանիշների պետք է ձևակերպվեին, որպես ընթացիկ ծախսեր և ներառվեին սակագնային մարժայի ընթացիք ծախսային հոդվածներում: Դրանք են մալուխային գծերի մինչև 50մ հատվածի փոխարինման աշխատանքները, իսկ օդային գծերի համար՝ մինչև 200մ երկարությամբ

գծի նորոգման կամ մինչև 5 հենասյան փոխարինման աշխատանքները: Այս ուղղությամբ նվազեցվող ներդրումները կազմել են 260,8 մլն դրամ,

7. լարման շեղման հաճախության և տևողության ցուցանիշների բարելավման և հատուկ ծրագրերի իրականացման ուղղություններով թվով 32 հասցեական աշխատանքներից 7-ում ներդրումները 24,4 մլն դրամ ընդհանուր ծավալով կատարվել են մասնակի: Նշված աշխատանքները ներդրումային ծրագրում տեղ են գտել հիմնականում բաժանորդների դիմում-բողոքների հիման վրա և ուղղված էին լուծելու հասցեական խնդիրներ: Ուստի այս աշխատանքների արժեքները սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում կներառվեն համաձայնեցված աշխատանքի ամբողջական ավարտից և դրական գնահատականից հետո:

8. բացի վերը նշվածը լարման շեղման ցուցանիշների բարելավման ուղղությամբ իրականացված ներդրումներից նվազեցվել են 259,8 մլն դրամի ներդրումներ, քանի որ այդ ներդրումների արդյունավետության վերաբերյալ բավարար հիմնավորումներ չեն ներկայացվել: Դրանք նույնպես սակագնային մարժայով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալում կներառվեն համապատասխան չափումների արդյունքում՝ դրական գնահատականների արձանագրման դեպքում:

9. իրականացվել է նաև հանձնաժողովի հետ համաձայնեցված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի համադրում: Համադրման ընթացքում հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալը համեմատվել է փաստացի իրականացված ներդրումների ծավալի հետ՝ վերը նշված նվազեցումների իրականացումից հետո: Արդյունքում, հանձնաժողովի հետ համաձայնեցված ներդրումների ծավալի գերազանցումը կազմել է շուրջ 167,7 մլն դրամ: Հարկ է նշել, որ համաձայն ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2010 թվականի հուլիսի 14-ի №365Ն որոշմամաբ հաստատված ներդրումային ծրագրերի համաձայնեցման կարգի՝ ընկերությունն ազատ էր 2012 թվականի ընթացքում դիմելու հանձնաժողով՝ ներդրումային ծրագրում

փոփոխություններ կատարելու առաջարկությամբ, սակայն նման դիմում հանձնաժողովին չի ներկայացվել,

10. 599,6 մլն դրամի ներդրումներ նվազեցվել են, քանի որ չեն համաձայնեցվել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:
11. սակագնային մարժայով փոխհատուցման ներդրումների ծավալից նվազեցվել է նաև նոր բաժանորդների միացման համար գանձված 781,6 մլն դրամի միացման վճարները:

Հաշվի առնելով վերլուծության արդյունքները՝ ստորև՝ աղյուսակ 6-ում ամփոփված է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2012 թվականին փաստացի իրականացված և հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը:

Աղյուսակ 6
(մլն դրամ)

1	2012 թվականի ընթացքում իրականացված ներդրումների ընդհանուր ծավալը	**8,892.328**
2	2012 թվականի ընթացքում ավարտված ներդրումների ծավալը	**8,216.024**
3	Իրականացված ներդրումներից նվազեցման ենթակա ներդրումները, այդ թվում՝	**2,829.445**
3.1	Վերլուծության արդյունքում նվազեցված ներդրումներ	**2,047.844**
3.1.1	Սարքավորումների արժեքից նվազեցումներ (շուկայական գները գերազանցելու պատճառով)	**288.281**
ա.	ԿՍՕ, ԿՌՈՒ, ՅԱՌՎ, ՎՌՈՒ, ՇՌՍ, ՇՉՕ, ԼՏԵ, ՏՄ և այլն	194.973
բ.	Էլեկտրոնային բազմասակագնային հաշվիչներ և հաշվիչի արկղեր	93.307
3.1.2	Կապալառու ընկերությունների կողմից իրականացված աշխատանքների արժեքից նվազեցումներ նախահաշվային տոկոսների կիրառման պատճառով	**241.813**
3.1.3	Նախագծման աշխատանքներից նվազեցումներ	**21.913**
3.1.4	Նոր սպառողների վերակառուցվող էլեկտրատեղակայանքները ցանցին միացնելուն ուղղված ներդրումներից (չմիացված բաժանորդների մասով)	**183.545**
3.1.5	0,4-6(10) կՎ լարման օդային և մալուխային գծերի վերակառուցման (մինչև 0,5 մլն դրամ արժողությամբ) աշխատանքներից	**260.756**
3.1.6	Մասնակի կատարված ներդրումներից	**24.423**

3.1.7	Թույլատրելի սահմաններից էլեկտրաէներգիայի լարման շեղման միջին տարեկան հաճախության և տևողության կրճատմանն ուղղված ներդրումներից	259.800
3.1.8	Համաձայնեցված ներդրումների ծավալը գերազանցող ներդրումներ	167.691
3.1.9	Չնախատեսված ներդրումներ	599.621
3.2	Նոր բաժանորդների միացման համար գանձված միացման վճարներ	781.601
4	**2012 թվականի ընթացքում իրականացրած ներդրումներից հետագա սակագներով փոխհատուցման ենթակա ներդրումների ծավալը**	**5,386.579**